Ինչ է հարկավոր հիշել

- Մի անտեսեք դատականչ-բողոքագիրը: Այն ինքնաբերաբար չի լուծվում և կարող են փոխել Ձեր ողջ կյանքը:
- Դուք միայն 30 օր ունեք դատականչ-բողոքագիրն պատասխանելու համար՝ այն ստանալու օրվանից հաշված:
- Եթե Դուք դատականչ-բողոքագրի կապակցությամբ հարցեր ունեք, խնդրում ենք դիմել փաստաթղթերում նշված երեխաների օգնության տեղական գործակալությանը կամ Ընտանեկան օրենսդրության գծով օգնականին:

Մենք պատրաստ ենք օգնել Ձեզ

Կալիֆոռնիայի երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտը իրավաբանական ծառայություններ չի տրամադրում ծնողներին կամ խնամակալներին:

Առնոլդ Շվարցենեգեր, Կալիֆոռնիա նահանգի նահանգապետ

Քիմբըրլի Բելշե, Կալիֆոռնիայի առողջապահության և սոցիալական ծառայությունների գործակալության քարտուղար

Դեյվիդ Մաքսվել-Ջոլլի՝, երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտի տնօրեն

1-866-249-0773 (անվճար)
www.childsup.ca.gov

PUB 249 (11/07)

Օգնություն Կալիֆոռնիայի երեխաներին

Երեխայի ապրուստադրամի վերաբերյալ դատարանի որոշման հաստատումը

Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտ

Երբ երեխաների օգնության տեղական գործակալությունը գործ է բաց անում, ապա երեխայի ապրուստադրամի վերաբերյալ դատարանի որոշում ստանալու համար առաջին քայլը, որ նա կատարում է, դա դատականչ-բողոքագիր պատրաստելն է: Պատրաստվում է նաև դատարանի որոշման նախագիծ՝ Ձեզ ցույց տալու համար, թե ինչ չափի գումար է Ձեզանից պահանջվում վճարել որպես երեխայի ապրուստադրամ:

Ի՞նչ է Դատականչ-բողոքագիրը

դատականչ-բողոքագիրն իրավական փաստաթուղթ է, որի օգնությամբ հաստատվում է հայրությունը, երեխայի ապրուստադրամը և բժշկական ապահովագրությունը:

Ի՞նչ է դատարանի որոշման նախագիծը

Դատարանի որոշման նախագիծն այն է, ինչը երեխաների օգնության տեղական գործակալությունը խնդրում է դատարանին ընդունել որպես որոշում:

Ինչպե՞ս ինձ տեղյակ կպահվի, երբ իմ դեմ դատականչ-բողոքագիր հարուցվի

Ձեզ անձամբ կտրվի դատականչ- բողոքագիրը կամ երբեմն այն կարող է հանձնվել Ձեր որևէ ծանոթի՝ Ձեր անունից: Նախքան փաստաթուղթը Ձեզ հանձնելը՝ երեխաների օգնության տեղական գործակալությունը կարող է Ձեզ բողոքագրի վերաբերյալ տեղեկացնող ծանուցագիր ուղարկել, որով Ձեզ տեղյակ կպահվի այն մասին, որ բողոքագիրը տանը կամ աշխատավայրում ստանալու փոխարեն Դուք կարող եք վերցնել այն երեխաների օգնության գրասենյակից:

Ի՞նչ պետք է անել Դատականչ-բողոքագիրը ստանալուց հետո

Փաստաթուղթը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Դուք պետք է պատասխանեք դրան: Պատասխանելու մի քանի եղանակ կա: Դուք կարող եք՝

Պատասխան բողոք ներկայացնել: Եթե Դուք համաձայն չեք դատարանի որոշման նախագծի որևէ կետի հետ, ապա Դուք պետք է փաստաթուղթը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում բողոքի պատասխան ուղարկեք դատարան: Բողոքի պատասխանի ձևը կցված կլինի Դատականչ-բողոքագրին: Դատարանի ընտանեկան օրենքի խորհրդատուն կարող է օգնել Ձեզ բողոքի պատասխանը պատրաստելու հարցում: Ընտանեկան օրենքի խորհրդատուն անվճար իրավաբանական օգնություն է տրամադրում և չի հանդիսանում երեխաների օգնության տեղական գործակալության աշխատակիցը:

Պարտավորագիր ստորագրել: Դուք կարող եք այցելել դատականչ-բողոքագրում նշված՝ երեխաների օգնության տեղական գործակալությունը և համաձայնագիր (պարտավորագիր) ստորագրել՝ ընդունելով երեխայի հայրությունը և ապրուստադրամ վճարելու ու երեխային առողջության ապահովագրություն տալու Ձեր պարտավորությունը:

Գենետիկական ստուգում անցեք: Եթե Դուք համարում եք, որ Դուք չեք բողոքագրում նշված երեխայի հայրը, դիմեք երեխաների օգնության Ձեր տեղական գործակալությանը, որպեսզի նրանց օգնությամբ ստուգում կատարվի և որոշվի, թե արդյո՞ք Դուք եք երեխայի հայրը:

Փաստաբան վարձել: Դատականչ- բողոքագիրն իրավական փաստաթուղթ է: Դա նշանակում է, որ Ձեր դեմ դատական գործ է հարուցվել: Ձեզ կարող է օգտակար լինել մասնավոր փաստաբան վարձել, որը կներկայացնի Ձեզ դատարանում:

Իրավաբանական օգնություն ստանալ: Դուք կարող եք դիմել ընտանեկան օրենքի խորհրդատուին, խնդրելով անվճար օգնել Ձեզ փաստաթղթերն ուսումնասիրելու և լրացնելու հարցում:

Մի անտեսեք դատականչ-բողոքագիրը:

Ի՞նչ տեղի կունենա, եթե ես չպատասխանեմ

Եթե Դուք անտեսեք այդ իրավական փաստաթղթերը, Դուք կճանաչվեք երեխայի հայր և հնարավոր է, որ դատարանը որոշի, Ձեզանից ապրուստադրամ գանձել:

Եթե 30 օրվա ընթացքում Դուք համաձայնագիր (պարտավորագիր) չստորագրեք կամ բողոքի պատասխան չուղարկեք, ապա դատարանի որոշման նախագիծը կդառնա դատարանի վերջնական որոշում, որը կնշանակի, որ դատարանը որոշում է կայացրել առանց Ձեր մասնակցության: Դա նշանակում է, որ Ձեր վճարելիք ապրուստադրամի չափը կարող է ճիշտ չլինել:

Ձեր իսկ շահերից է բխում այս գործին մասնակցելը՝ նախքան այն դատարանի վերջնական որոշում կդառնա: Ձեր տրամադրած տեղեկությունները կօգնեն ճիշտ որոշում կայացնել երեխայի ապրուստադրամի վերաբերյալ:

Եթե համոզված չեք, որ Դուք եք երեխայի հայրը, Դուք պետք է ծագումնաբանական ստուգում պահանջեք:

Եթե Դուք ստուգում չպահանջեք, ապա կճանաչվեք երեխայի օրինական հայր, անգամ եթե Դուք չեք նրա իսկական հայրը: Երեխաների օգնության տեղական գործակալությունը կարող է օգնել Ձեզ ստուգում պատվիրելու հարցում:

Կյանքում և դպրոցում լիարժեք կյանքով ապրելու համար երեխաներն ինչպես մոր, այնպես էլ հոր կարիքն ունեն: